



«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Ընտանիքի հոգեբանություն և կոնֆլիկտներ

Առարկան՝ Հայոց լեզու և հայ գրականություն

Հետազոտող ուսուցիչ՝ Աշխեն Շահբազյան

Ուսումնական հաստատություն՝ Երևանի թիվ 112 ավագ դպրոց

Երևան 2022

Բովանդակություն

Ներածություն	— էջ 3
Մաս 1-Հնտանիք, ընտանեկան հոգեբանություն	— էջ 4
Մաս 2-Կոնֆլիկտներ	— էջ 8
Եզրակացություն	— էջ 11
Օգտագործված գրականության ցանկ	— էջ 12

Ներածություն

Յուրաքանչյուր հասարակության հիմքը, ամենաառանցքային օղակը ընտանիքն է: Առողջ, ամուր ընտանիքը մարդկանց երջանկության կարևորագույն բաղադրիչներից մեկն է: Ընտանիքը բերում է կյանքի լիակատարություն, բավարարվածություն, հոգեկան ներդաշնակություն:

Ընտանիքում ծնվում ու մեծանում, դաստիարակվում ու ձևավորվում է նոր սերունդը: Այդ իսկ պատճառով էլ ընտանիքի անդամների հոգեբանությունը, բարոյահոգեբանական մթնոլորտը, ընտանիքում առկա կոնֆլիկտների ճանաչումը, պատճառների բացահայտումը և չեզոքացման ուղիների հայտնաբերումը ուշադրություն և ամենօրյա հոգածություն են պահանջում պետության, հասարակության, շրջապատի, դպրոցի կողմից:

Լավ ընտանիքներն ինքնին չեն ծնվում: Դրանք ամենից առաջ հենց ամուսինների անդուլ ջանքերի արդյունք են: Այդ ջանքերում միավորվում են թե միմյանց ու երեխաների դաստիարակությունը, թե ինքնադաստիարակությունը:

Ընտանեկան կյանքը մարդուց շատ տարբեր գիտելիքներ և կարողություններ է պահանջում: Մույն հետազոտական աշխատանքի նպատակն է ներկայացնել, թե ի՞նչ է ընտանիքը, ի՞նչ գործառույթներ ունի յուրաքանչյուր ընտանիք հասարակության մեջ, պատկերացում տալ ընտանիքի ազդեցության, նրա կարևորության, հոգեբանության մասին, ընտանիքում բարոյահոգեբանական մթնոլորտի վրա ազդող գործոնների մասին, համատեղելիության, դրանց տեսակների մասին:

Մեր նպատակն է ներկայացնել ընտանիքում առկա կոնֆլիկտները, պարզել, թե ընդհանրապես ի՞նչ կոնֆլիկտներ կարող են ծագել ընտանիքներում, ինչու՞, ի՞նչ պատճառներով:

Հետազոտական աշխատանքը բաժանված է երկու մասի.

Առաջին մասը ներկայացնում է, թե ի՞նչ են ընտանիքը, ընտանեկան հարաբերությունները, ընտանեկան հոգեբանությունը: Մանրամասն ուսումնասիրության արդյունքում փորձ է արվել պարզել՝ որո՞նք են ընտանիքի համար ճգնաժամային փուլերը, և ի՞նչ է պետք յուրաքանչյուր մարդու ընտանիքում ներքին ներդաշնականությունը ապահովելու համար: Երկրորդ մասում ներկայացված են ընտանիքներում ծագող կոնֆլիկտները, դրանց տեսակները և հաղթահարման ուղիները: Փորձ է արվել պարզել, թե ինչի՞ շուրջ, ինչի՞ց կարող են առաջանալ կոնֆլիկտներ, և ինչպե՞ս են տարբեր տարիքային խմբերի մարդիկ վերաբերվում կոնֆլիկտներին ու դրանք վերացնելու հնարավոր միջոցներին:

Հիմնական հասկացություններն են՝ անձ, անհատ, անհատականություն, ինքնագնահատում, գիտակցում, ինքնաճանաչում, նպատակատուղովածություն, համակեցություն, համատեղելիություն, ընտանիք, փոխզիջում, սեր, հարգանք, համերաշխություն:

Հետազոտական աշխատանքի վերջին հատվածում ներկայացված է մեր կողմից արված եզրակացությունը և օգտագործված գրականության ցանկը:

Մաս 1

Ընտանիք , ընտանեկան հոգեբանություն

Ընտանիքը ամուսնության , ազգակցության կամ որդեգրության վրա հիմնված մարդկանց փոքր խումբն է , որն ապրում է մի հարկի տակ և վարում է ընդհանուր տնտեսություն:

Մովորաբար ընտանիքի անդամները իրար հետ կապված են արյունակցական , զգացմունքային , հարազատական կապերով , միմյանց նկատմամբ զգում են փոխադարձ պատասխանատվություն:

<<Ընտանիքը սոցիալական ինստիտուտ է , այսինքն՝ մարդկանց փոխհարաբերությունների կայուն ձևը , բայց և բաց համակարգը , որը անընդհատ ենթարկվում է շրջապատին , հասարակության մեջ տեղի ունեցող իրադարձություններին , փոփոխվող ազդեցություններին>>(Բ. Գրեբեննիկով<<Ընտանեկան կյանքի բարոյագիտություն և հոգեբանություն>>Երևան 1986թվ)

Հանդիսանալով հասարակության առանցքային բջիջը՝ ընտանիքը բավարարում է նրա մի շարք կարևորագույն պահանջումները , այդ թվում հան բնակչության վերարտադրության պահանջումները: Ընտանիքի հիմնական ֆունկցիաներն են վերարտադրության , տնտեսական , դաստիարակչական , ժամանցի ու հանգստի կազմակերպման , հաղորդակցական գործառնությունները:

Ընտանիքի վերարտադրության ֆունկցիան կյանքի վերարտադրության , այսինքն՝ երեխաներ ունենալու , մարդկային սերնդի շարունակման մեջ է : Այն իր մեջ ներառում է մյուս բոլոր ֆունկցիաները , քանի որ ընտանիքը մասնակցում է բնակչության ոչ միայն քանակի ավելացմանը , այլև որակի բարձրացմանը: Դա ամենից առաջ կապված է նոր սերնդին մարդկության գիտամշակութային նվաճումներին հաղորդակից դարձնելու , նրա առողջությունը պաշտպանելու , ինչպես նաև աճող սերնդի մեջ տարբեր բնույթի կենսաբանական շեղումների վերարտադրությունը կանխելու հետ:

Ընտանիքի տնտեսական ֆունկցիան ընդգրկում է ընտանեկան հարաբերությունների հետևյալ հիմնական ասպեկտները՝ ընտանիքի գոյության նյութական պայմանների ապահովում , նրա անդամների նյութական և մի շարք հոգևոր պահանջների բավարարում , տնային և անձնական տնտեսության վարում , տնային բյուջեի պահպանում , ընտանիքի կառավարում , փոխադարձ օգնություն՝ առողջության և կենսական ուժերի պահպանման գործում :

Տնտեսական ֆունկցիայի հետ սերտորեն կապված է ընտանիքի կառավարման , այսինքն՝ գլխավորի խնդիրը: Բազմաթիվ ուսումնասիրությունների արդյունքում բացահայտվել է , որ ընտանիքի կառավարման ամենաառաջադիմական ձևը ամուսինների միջև իրավահավասարությունն է: Եթե կառավարման ծանրության բեռը ընկնում է միայն հոր կամ միայն մոր ուսերին , ապա ընտանիքում խախտվում է հոգեբանական հավասարակշռությունը և առաջանում են կոնֆլիկտներ: Այդ ամենից խուսափելու համար պետք է ընտանիքի յուրաքանչյուր անդամ ունենա պարտականությունների իր բաժինը և դրսևորի պատասխանատվություն :

Ընտանիքի կյանքը խիստ բազմակողմանի է , և պակաս կարևոր չեն ընտանիքի հաղորդակցական , ժամանցի և հանգստի կազմակերպման ֆունկցիաները: Ընտանիքի անդամների շփումը արտաաշխատանքային ժամերին , հաղորդակցումը միմյանց հետ , միասին երկար ժամանակ անցկացնելը , ազատ ժամանակի արդյունավետ բաժանումը , կյանքի ճիշտ ռիթմն ու ռեժիմը , աշխատանքի և հանգստի պլանավորումը ներազդում են մարդու ֆիզիկական և հոգևոր ուժերի վերականգնվելու , անձի բազմակողմանի զարգացման , աճող սերնդի դաստիարակության վրա:

Ընտանիքի դաստիարակչական ֆունկցիան ամենակարևորն է և ամենաեականը: Ընտանիքում են դաստիարակվում և չափահասներ , և երեխաներ: Ահա ինչու դաստիարակչական ֆունկցիան պետք է դիտել երեք տեսանկյունից:

Առաջին՝ նրա չափահաս անդամների կողմից կուտակած փորձի փոխանցումը զավակներին: Երկրորդ՝ ընտանեկան կոլեկտիվի պարբերական դաստիարակչական ներգործությունը յուրաքանչյուր անդամի վրա: Երրորդ՝ զավակների մշտական ազդեցությունը ծնողների վրա, որը նրանց մղում է ակտիվորեն զբաղվել ինքնադաստիարակմամբ:

Մեծ է ընտանիքի ազդեցությունը երեխաների վրա: Այդ ազդեցությունը զարմանալի է իր կարևորությամբ: Հետազոտությունների արդյունքում պարզվել է, որ միջև երեք տարեկան երեխաներն առանձնապես հակված են մոր ներգործությանը:

Հենց կյանքի առաջին օրերին ու ամիսներին են երեխայի մոտ դրվում աշխարհի նկատմամբ նախնական վստահությունը կամ անվստահությունը, որոնք առաջանում են հուզական պաշտպանվածության կամ անպաշտպանության զգացումներից և անխուսափելիորեն ազդում են նրա անձի վրա:

Շվեյցարիացի ականավոր մանկավարժ Ի. Պեստալոցցին իր „Գիրք մայրերի համար„ գրքում (Ցյուրիխ 1803թվ.) գրել է. «Մայրական զգացմունքը, հայրական ներգործության ուժը, ընտանեկան առաքինությունները, սիրո բովանդակ հմայքը, շրջակա միջավայրի ողջ փորձը, այս ամեն լավագույնի փոխկապակցվածությունը և ընտանիքի անդամներին միավորող շղթաների միջոցով դրա ներգործությունը, նույնիսկ ապահովված ընտանիքների համար անխուսափելի տնային անախորժություններն ու հոգսերը՝ այս ամենը լավ դաստիարակության հենց բնության կողմից սահմանված հիմքերն են»:

Քանի որ ընտանեկան դաստիարակությունն անիմաստ է առանց երեխաների նկատմամբ ծնողների տածած սիրո և ծնողների հանդեպ զավակների պատասխան զգացումի, ուստի «այն իր բնույթով ավելի հուզական է, քան ցանկացած այլ դաստիարակություն»:

Երեխաների վրա ընտանիքի դաստիարակչական ներգործության բնորոշ առանձնահատկությունը նրա արդյունքների կայունությունն է:

Այսպես, վաղ և նախադպրոցական հասակի երեխաների դաստիարակության նկատմամբ ծնողների ճիշտ վերաբերմունքը հետագայում դրականորեն է անդրադառնում նրանց ուսումնական, աշխատանքային և հասարակական ակտիվության վրա: Ընտանիքն ուժեղ ազդեցություն է ունենում երեխաների բազմակողմանի զարգացման վրա: Ճիշտ դաստիարակության դեպքում երեխաները առողջ ընտանիքներում մեծանում են կամային ճիշտ հատկանիշներով՝ աշխատասիրություն, կարգապահություն, նպատակասլացություն, ազնվություն, ինքնուրույնություն, հոգատարություն, օգնելու պատրաստակամություն, բարդ իրավիճակներում կողմնորոշվելու, իրենց հնարավորությունները իրացնելու, տնային տնտեսությունը վարելու կարողություն: Ծնողների հարաբերությունները միմյանց նկատմամբ, նրանց փոխհարաբերությունները երեխաների հետ, ներընտանեկան մթնոլորտը անբեկանելի ազդեցություն են ունենում անհատի ձևավորման վրա, և հենց այդ հարաբերությունների ոճը երեխան կրում է իր վրա միշտ՝ փոխանցելով ընկերների հաղորդակցման ոլորտ, դպրոց, բակ, իսկ հետո մեծանալով նաև աշխատանքային միջավայր: Ուստի շատ կարևոր է, թե ինչպես են ձևավորվում երեխաների ու ծնողների միջև փոխհարաբերությունները, ինչքանով են հույզերով մտերիմ նրանք միմյանց հետ:

Դորոթի Լո Նոյթը իր «Հոգեբանություն և հեղափոխություն» գրքում (Երևան 1991թվ.) գրում է. «Երեխաները սովորում են այն ամենը, ինչ տեսնում են իրենց շուրջը: Եթե երեխան շարունակ քննադատվում է, կսովորի մեղադրել, եթե շրջապատված է թշնամանքով, կսովորի պատերազմել ու կդառնա ագրեսիվ: Եթե երեխան ծաղրանքի է ենթարկվում, կդառնա վախկոտ, եթե շարունակ ամոթանքի է արժանանում, մեղքի զգացումը չի լքի նրան: Եթե երեխան հանդուրժողականության մթնոլորտում է ապրում, կլինի համբերատար, եթե արժանանում է գովասանքի, կսովորի գնահատել: Եթե երեխան ազնիվ մթնոլորտում է մեծանում, կլինի արդարամիտ, եթե մեծանում է ապահով միջավայրում, կսովորի հավատալ: Եթե հավանության է արժանանում, կսովորի ինքն իրեն գնահատել, եթե շրջապատված է ջերմությամբ, ապա կսովորի սիրել»:

Երեխան ամեն օր իր շուրջը կենդանի իրականություն է տեսնում և անմիջապես մասնակցում նրան , նա լսում է ծնողների դատողություններն ու գնահատումները, դիտում է նրանց վերաբերմունքը միմյանց և ուրիշ մարդկանց նկատմամբ: Ընտանիքը , ի դեմս ծնողների, ավագ եղբայրների ու քույրերի , տատիկի ու պապիկի , երեխայի առջև բացում է վարքագծի ամենատարբեր ձևերի , բառերի , ժեստերի , շարժումների, միմյանց ,ուրիշների նկատմամբ ,մեր երկրում և նրա սահմաններից դուրս տեղի ունեցող քաղաքական իրադարձությունների,հասարակական երևույթների յուրատեսակ դրսևորումներ:

Ինքնըստինքյան երեխան ներգավվում է սոցիալական հարաբերություններում, որոնք ձևավորում են ապագա անհատին : Ուրիշ մարդկանց նկատմամբ երեխայի ձևավորվող վերաբերմունքը որոշվում է ամենից առաջ նրա նկատմամբ հարազատների ու մերձավորների վերաբերմունքով:Այսպես ձևավորվում է նրա ինքնագիտակցությունը: Երեխան մեծերից սովորում է ոչ միայն քայլել, խոսել , ճիշտ օգտագործել տարբեր իրեր,խաղալ , սովորել աշխատել , այլ նաև զգալ , մտածել , վերապրել , վերաբերմունք դրսևորել:

Լ.Տոլստոյը նախագգուշացնում էր ,որ երեխան օրինակից հարյուր անգամ ավելի ուժեղ է <<վարակվում>> ,քան ամենապերճախոս ու խելացի խրատներից: Հարկավոր է նաև հիշել , որ սկզբում ընտանիքն է ձևավորում երեխային , իսկ այնուհետև հասունացած երեխան իր ներգործությունն է ունենում ընտանիքի վրա: Երեխայի մեջ ուրիշ մարդկանց ,ծնողների նկատմամբ զգայուն ,բարոյական վերաբերմունք դաստիարակելու համար անհրաժեշտ է,թր իրենք ծնողները կանգնած լինեն անհրաժեշտ մակարդակի վրա և ընտանիք կազմելուց առաջ ունենան որոշակի գիտելիքներ և կարողություններ:

Ամուսնալուծությունների պատճառների վերլուծությունը ցույց է տալիս , որ ընտանիքների երեք քառորդը քայքայվում է ընտանեկան կյանքին բարոյապես , ֆիզիկապես և հոգեբանորեն շատ թույլ նախապատրաստված լինելու պատճառով:Ընտանեկան հարաբերությունները պահանջում են ,որ տղամարդը և կինը , որոնք կամավոր և իրավահավասար դաշնություն են կնքել , ունենան բարոյաէթիկական, հոգեբանական պատրաստվածության բարձր մակարդակ , կենցաղի կուլտուրա : Ամուսինների փոխադարձ սերը , ինքնաքննադատությունը , միմյանց , երեխաների , հասարակության հանդեպ պատասխանատվությունը և պարտքի զգացումը , մտավոր և բարոյական փոխհատուցումը , ծնողների և ավագների նկատմամբ երեխաների սերը այն հիմքերն են ,որ ընտանիքը դարձնում են մարդկային երջանկության անսպասակունք : Մարդու ձևավորումը սկսվում է նրա կյանքի առաջին տարիներից : Շատ կարևոր է անհրաժեշտ անձնական արժանիքները զարգացնելուն զուգահեռ զարգացնել նաև ուրիշ մարդկանց արժանիքները ճանաչելու կարողությունները:

<<Ընտանիք ստեղծում են երկու մարդ, որոնցից յուրաքանչյուրն ունի իր << եսը >>, իր անհատականությունը: Որքանով է անհատը պատրաստ իր <<եսը >> դարձնել << մենք>>, <<իմը>> դարձնել <<մերը>>, այդքանով էլ ընտանիքի բարոյահոգեբանական մթնոլորտը կլինի նորմալ : Ընտանեկան այբուբենը սկսվում է մենքից>>(Ի.Գրեբեննիկով<<Ընտանեկան կյանքի բարոյագիտություն և հոգեբանություն>>Երևան 1986թվ.)

Ընդ որում անհրաժեշտ է այնպիսի միասնություն, ուր մի կողմից ընտանեկան պահանջումները մղվեն առաջին պլան, մյուս կողմից բավարարվեն ընտանիքի յուրաքանչյուր անդամի անձնական պահանջումները:Հենց <<մենքի>> մեջ <<եսի>> անցման հետ կապված այդ որակական թռիչքն ընտանիք կազմող մարդկանց համար պետք է դառնա երջանկության և բավականության աղբյուր:Ընտանեկան կյանքը մարդուց պահանջում է անկեղծություն,մշտական ինքնագոհություն,հոգատարություն, ընտանիքի մյուս անդամների հետաքրքրություններով, ուրախություններով , հոգսերով ապրելու ընդունակություն:

Երջանիկ , կայացած և ներդաշնակ ընտանիքի հիմքը պետք է լինեն 3 սյուներ՝ սերը, ներողամտությունը,համբերությունը:

Իսկ հոգեբանական ձևակերպմամբ ընտանիքում ներքին ներդաշնակությունը ստեղծելու համար անհրաժեշտ է ապահովել 2 կարևոր գործընթացներ.

1. ասիմիլացիա -աճ ,գարգացում , փոխակերպում ,վերափոխում,որը ապահովում է ներքին կայունությունը:

2. ադապտացիա և ակունդացիա-հարմարունակություն ,ճկունություն նոր միջավայրին հարմարվելու: Այն ապահովում է նորի մուտքը ընտանիք՝ առանց հինը վնասելու:

Այս երկու կարևորագույն եզրույթներն էլ ապահովում են ընտանիքի հոգեբանական մթնոլորտը: Ինչ է նշանակում հոգեբանական մթնոլորտ և ինչու ենք <<մթնոլորտ >>հասկացողությանը դիմում , երբ խոսքը հոգեբանական երևույթին է վերաբերում:

Հոգեբանական մթնոլորտը ընտանիքում մարդկանց հոգեբանական վիճակների ,տրամադրությունների ու փոխհարաբերությունների ամբողջությունն է: Սովորաբար ընդունված է հոգեբանական մթնոլորտը բնորոշել բարենպաստ և անբարենպաստ բառերով:

Հոգեբանական մթնոլորտն ավելի ցայտունորեն դրսևորվում է մարդկանց համատեղելիության մեջ:

Միմյանց հետ մարդկանց համատեղելիության մասին խոսելիս ամենից առաջ նկատի է առնվում արժեքների , հետաքրքրությունների , հուզական կենսանախադրյալների , կյանքի ընդհանուր ոճի որոշակի ներդաշնակությունը:

Եթե ընտանիքում նման ներդաշնակություն կա, ապա այնպիսի փոխըմբռնում է առաջանում նրա բոլոր անդամների միջև, որ դիմացինի և արժանիքները , և թերություններն իմանալով հանդերձ , մարդուն ընդունում են այնպես , ինչպես նա կա իր բնավորության , խառնվածքի , սովորությունների առանձնահատկություններով:

Ասենք ընտանիքում մեկն ավելի եռանդուն է, սակայն շուտ էլ սառչում է, մյուսը վեհերոտ է , անվճռական , բայց փոխարենը չի հրաժարվում հանձնարարված գործերից , երրորդը՝ կարեկից է, նրան միշտ էլ կարելի է քո , թեկուզ և աննշան կամ կարծեցյալ, դժբախտությունների մասին պատմել և այլն:

Նման ընտանիքներում յուրաքանչյուրը գիտի մյուսների առանձնահատկությունները և չի փորձում շտկել դրանք՝ հաշվի առնելով, որ ինքը ևս կատարելություն չէ: Դիմացինին ամբողջապես ընդունելը այն կարևոր պայմանն է, որը մտերիմ մարդկանց

փոխհարաբերություններում ապահովում է հոգեբանական դյուրահարմարությունը:

Համատեղելիությունը դրսևորվում է նաև նրանով , որ մերձենում են ընտանիքի անդամների կարծիքներն ու գնահատելու կարողությունները: Գնահատելու չափանիշի այսպիսի մերձեցում առաջանում է բնական ճանապարհով: Իսկ երբ միանման կարծիքի են հասնում իրենց գնահատականներն ու ճաշակները մյուսների վզին փաթաթելու հաշվին , ճնշում գործադրելու, մնացածների տեսակետներն արհամարհելու հաշվին , այդ դեպքում հարկ չի լինում խոսել համատեղելիության մասին :

Համատեղելիության տեսակները բազմազան են ,բայց ավելի հաճախ դրսևորվում են հետևյալ մակարդակները՝ գաղափարաբարոյական ընդհանրությունը, սոցիալ – հոգեբանական և հոգեֆիզիոլոգիական համատեղելիությունները:

Իսկ որն է համատեղելիության ցուցանիշն ընտանիքում:

Որպես արտաքին , օբյեկտիվ ցուցանիշ կարող է ծառայել հենց ընտանիքն ըստ էության և ոչ թե հարկադրաբար պահապանելու փաստը: Համատեղելիության ներքին , սուբյեկտիվ ցուցանիշ է ընտանիքի անդամների հոգեբանական հարմարավետության հուսալիության զգացողությունը, հոգևոր ,սրտառուչ ընդհանրությունը, միմյանց հետ շփվելուց ստացած բավարարվածության ապրումները:Այսպիսի ընտանիքում հոգեբանական բարենպաստ մթնոլորտ է տիրում:

Ընտանեկան բարոյահոգեբանական բարենպաստ մթնոլորտն ազդում է նաև ամուսինների ու ընտանիքի մյուս անդամների այնպիսի զգացմունքների ձևավորման վրա, ինչպիսիք են իր նկատմամբ ունեցած վստահությունը, մարդկանց հանդեպ տաժած հավատը,

կենսուրախությունն ու հավասարակշռվածությունը և նպաստում է այն բանին ,որ նրանք հաջողությամբ իրականացնեն իրենց աշխատանքային և ուսումնական գործունեությունը: Ընտանիքի անդամների միջև սերը , հարգանքը, հոգատարությունը ,փոխըմբռնումը , ներդաշնակ համատեղելիությունն էլ ստեղծում են բարոյահոգեբանական բարենպաստ մթնոլորտը , իսկ դրանց բացակայությունը անբարենպաստ:

Անբարենպաստ մթնոլորտի առկայության դեպքում ընտանիքում անհամատեղելիության ֆենոմենն է իշխում: Այս դեպքում ընտանիքի անդամների ` միմյանց հետ հաղորդակցվելու և փոխգործունեության մեջ մտնելու պահանջունքը խիստ սահմանափակ է: Մարդիկ օտարանում , մեկուսանում են միմյանցից:Դա կարող է բացահայտորեն դրսևորվել , երբ բոլորը ջանում են որքան հնարավոր է քիչ ժամանակ անցկացնել միասին ` վկայակոչելով առաջին հայացքից հարգելի թվացող պատճառներ աշխատանքը , սովորելը, արձակուրդների չհամընկնելը և այլն: Բայց կարող է և աննկատ ընթանալ ,երբ ընտանիքի անդամները <<միմյանց կողքի են , բայց միասին չեն>>,հարկադրական բնույթ է կրում հաղորդակցվելը և այլն:Անհամատեղելիությունը կարող է տարբեր լինել և բնույթով , և դրսևորման աստիճանով : Սկսած բախումներից ,վեճերից,տևական երկպառակություններից մինչև արտաքուստ բարեկիրթ վարվելակերպը,որը ,սակայն, ժամանակ առ ժամանակ պայթում է հանկարծական պռոթկումներով:Ընտանիք կազմելուց հետո սկսվում է ամուսնական առօրյան իր խնդիրներով և կենցաղային հոգսերով:Դժվար է գոյակցել օրեր շարունակ առանց վեճերի , կռնֆլիկտների և ճգնաժամերի:Եվ այսպես խաթարվում է ընտանիքի բարոյահոգեբանական մթնոլորտը:

Մաս 2 Կոնֆլիկտներ

Փորձենք պարզել՝ ի՞նչ է կոնֆլիկտը, որո՞նք են կոնֆլիկտների առաջացման պատճառները, Ինչպիսի՞ն կարող են լինել ընտանիքում ծագած կոնֆլիկտները:

Կոնֆլիկտ – բառարանում այս բառը մեկնաբանվում է լատիներեն *conflictus* բառից, նշանակում է ընդհարում, այսինքն՝ հակադիր շահերի, հայացքների, ձգտումների բախում, սուր վեճ:

Կոնֆլիկտը ինչ-որ հարցի շուրջ առկա տարաձայնությունն է: Կոնֆլիկտների առաջացման պատճառները լինում են տարբեր: Ընտանիքում, որտեղ մեկտեղվում են տարբեր տարիքների, հայացքների, սեռերի մարդիկ, անհամաձայնություններն անխուսափելի են, և այդ վեճերը շատ հաճախակի վերածվում են կոնֆլիկտների, որոնք էլ բերում են շատ անցանկալի հետևանքներ. մեծանում է լարվածությունը, բարձրանում է նյարդայնությունը, որն էլ հանգեցնում է սթրեսների, խաթարվում է ընտանիքի բարոյահոգեբանական մթնոլորտը, ընդհուպ մինչև ընտանիքի փլուզում: Այն պահին, երբ ընտանիքի ներսում կոնֆլիկտ է հայտնվում, հայտնվում է նաև անկայունություն, որը կարող է հանգեցնել հիասթափությունների և անհանգստությունների: Ընտանիքում առաջացնող կոնֆլիկտներից խոսափելու համար հարկավոր է ճանաչել դրանց տեսակները և իմանալ կոնֆլիկտների լուծման եղանակները

Իրենց բնույթով կոնֆլիկտները բազմատեսակ են: Հատկապես տարածված են ներանձնային և միջանձնային կոնֆլիկտները:

Ներանձնային կոնֆլիկտի դեպքում մարդը տարաձայնությունների մեջ է ինքն իր հետ, առկա է այսպես կոչված անձի երկվորյան երևույթը:

Միջանձնային կոնֆլիկտի ժամանակ տարաձայնության մեջ են կոնֆլիկտող կողմերը, անհատները կամ խմբերը՝ կախված նպատակների և վարքի տարբեր դրսևորումներից:

Այս կոնֆլիկտները կարող են լինել .

1. Բաց, երբ կողմերի թե վարքը, թե նպատակները անհամատեղելի են:

2. Մակերեսային, երբ կողմերի միջև կան համատեղելի նպատակներ, բայց անհամատեղելի է վարքը:

3 Թաքնված (լատենտ) կոնֆլիկտներ, որոնք շատ ավելի վտանգավոր են, որովհետև կողմերը ունենում են անհամատեղելի նպատակներ, սակայն իրենց վարքում ոչ մի կերպ չեն ընդգծում այն:

Հետազոտության արդյունքում բացահայտվել է, որ կոնֆլիկտները հիմնականում առաջանում են ընտանիքի համար ճգնաժամային փուլերում:

Այդպիսի փուլերը 5-ն են.

1. Միմյանց հարմարվելու փուլ – սա ամուսնական կյանքի առաջին տարին է, երբ ձևավորվում են նոր որակի հարաբերություններ: Այս շրջանում ծագած կոնֆլիկտները հիմնականում մակերեսային են, երբ կոնֆլիկտող կողմերի նպատակները համընկնում են, բայց վարքը տարբերվում է, և առաջանում են անհամաձայնություններ, բախումներ, ընդհարումներ:

2. Երեխա ունենալու փուլ – Երբ երեխա ունենալու և նրա խնամքի հետ կապված բարդանում են ամուսինների հարաբերությունները: Հատկապես լարվածություն է առաջանում կնոջ հոգնածության պատճառով, չկա մասնագիտական ներգրավվածություն, քիչ ժամանակ է տրամադրվում նեղ անձնական ցանկություններին, և ամուսինների միջև իրար չօգնելու, չհասկանալու, չզիջելու պարագայում առաջանում են սուր, բաց կոնֆլիկտներ, նյարդային պոռթկումներ:

3. Երեխաների դաստիարակության փուլ- Այլ կերպ այս փուլը անվանվում է բախման փուլ, որովհետև այս ընթացքում երեխայի դաստիարակության հետ կապված ամուսինների և նրանց ծնողների միջև մոտեցումների, հայացքների, տեսակետների բախում է տեղի ունենում, որն էլ հանգեցնում է ամենատարբեր տեսակի կոնֆլիկտների առաջացման և բաց և թաքնված, որն էլ ավելի վտանգավոր է:

4. Միապաղատության կամ ամուսնական միջին տարիքի փուլ- Այս շրջանը երբեմն անվանում են նաև քաղցի շրջան, երբ գույգերի միջև զգացմունքների հագեցվածություն է նկատվում, կորչում է հետաքրքրությունը և խանդավառությունը, երբ գույգերի միջև գոյանում է անտարբերության պատր: Այս շրջանում կոնֆլիկտները, որպես կանոն, թաքնված (լատենտ) բնույթ ունեն և եթե դրանք շուտ չբացահայտվեն, ապա շատ ծանր հետևանքներ կարող են ունենալ:

5. Միայնականության զգացողության փուլը- Այս փուլը վրա է հասնում, երբ երեխաները մեծանում են, դառնում են ինքնուրույն, երբեմն նաև հեռանում են, ծնողների մոտ աստիճանաբար ձևավորվում է միայնության, լքված, անպետք լինելու զգացողություն: Այս շրջանում բաց կոնֆլիկտներ են առաջանում ծնողների և երեխաների միջև: Ընտանիքում և առհասարակ կոնֆլիկտների ահագնացման տարբեր աստիճաններ են առանձնացվում.

1. Նախակոնֆլիկտային իրավիճակ, երբ ամեն ինչ շատ ավելի հեշտ կարելի է հարթել:

2. Միջադեպ- բախում, երբ կոնֆլիկտը դառնում է բացահայտ:

3. Թեժացում կամ էսկալացիա, որը ամենավտանգավորն է:

4. Գազաթնակետ կամ կուլմինացիա, երբ հետևանքները կարող են լինել անդառնալի:

Հետազոտության նպատակով արված հարցումների արդյունքում պարզաբանեցինք, որ ընտանիքում կոնֆլիկտների առաջացման օջախներն էլ տարբեր են լինում:

Հիմնականում դրանք 6-են ֆինանսական

գույգերի փոխհարաբերության

երեխաների դաստիարակության

իրավունքների և պարտականությունների բաշխման

միջանձնային և տարիքային փոխհարաբերությունների

ընտանիքում գերակա դիրք ունենալու, գերազանցության:

Ֆինանսների շուրջ առաջացած կոնֆլիկտները ծագում են փողի սղության, անբավարար ֆինանսական հնարավորությունների, ֆինանսների ոչ ճիշտ բաշխման, կենցաղային տարրական պայմանների բացակայության դեպքում:

Զույգերի փոխհարաբերությունների շուրջ կոնֆլիկտներ կարող են առաջանալ սիրո, հարգանքի բացակայության, թերաթժեքության զգացողության, սեռական հարաբերությունների, անվստահության, անհավատարմության, անհավասար ամուսնությունների, տարիքային տարբերության դեպքում, հասարակության մեջ զբաղեցրած դիրքով, ազգային, քաղաքական, կրոնական հայացքներով, երեխաների դաստիարակության տարբեր մոտեցումներով պայմանավորված:

Երեխաների խնդիրներով պայմանավորված կոնֆլիկտները ընտանիքում ամենաշատն են հանդիպում: Այդ կոնֆլիկտները անխուսափելի են, երբ տարբեր սերունդի ներկայացուցիչների կողմից առաջ են բերվում դաստիարակության տարբեր մոտեցումներ, անհարկի զիջողականություն և չհիմնավորված արգելքներ: Երբ ծողները հեղինակագրկում են մեկը մյուսին երեխայի մոտ, դրսևորում են ագրեսիա, բռնի ուժ և էգոիստական մոտեցումներ՝ հաշվի չառնելով երեխայի կարծիքը և ցանկությունները:

Զափազանց կարևոր է ընտանիքում իրավունքների և հատկապես պարտականությունների ճիշտ և հավասար բաշխում կատարել: Երբ գործերը, պարտականությունները ճիշտ չեն

բաժանվում, ճիշտ չեն ընկալվում, երբ մեկը մյուսի ուսերին է բարդում իր պարտականությունները կամ թերանում է կատարել դրանք, նոր կոնֆլիկտներ են առաջանում: Միջանձնային և տարիքային փոխհարաբերությունների շուրջ նույնպես կոնֆլիկտներ կարող են առաջանալ, երբ ընտանիքի տարիքավոր և ավելի երիտասարդ անդամների միջև չկա փոխզիջում, հարգանք, պակասում է ներողամտությունը:

Ընտանիքում գերակա դիրք ունենալու, գերազանցության ձգտում հիմնականում ունենում այն անձինք, որոնք հասարակության մեջ հիմնականում բարձր դիրք, պաշտոն են զբաղեցնում և սովոր են կայացնել ինքնիշխան որոշումներ, հաշվի չեն առնում ընտանիքի մյուս անդամների կարծիքը: Այս պարագայում նույնպես կոնֆլիկտներ միանշանակ առաջանում են:

Տարբեր պատճառներով առաջացած բոլոր կոնֆլիկտների լուծումները նույն են:

Պետք է կատարել պարտավորությունների և իրավունքների հստակ սահմանազատում և նկարագրություն: Բանական փոխհարաբերությունների համար անհրաժեշտ է խնդրի էության ըմբռնում, վերլուծություն, պատճառների վերհանում, իրար լսելու կարողություն, ապա նաև համատեղ որոշումներ կայացնելու կարողություն:

Կոնֆլիկտների լուծման եղանակները նույնպես տարբեր են լինում.

1. Մրցակցություն, երբ մի կողմը իր համատեղությամբ հաղթում է մյուս կողմին:

2. Խուսափում և զիջում, երբ առանց բախման մեկը պարտվում է:

3. Փոխզիջում, երբ երկու կողմերն էլ պարտվում են:

4. Համագործակցություն, երբ երկու կողմերն էլ շահում են:

Ընտանիքում առաջացած ցանկացած ճգնաժամ պահանջում է բոլոր անդամների համագործակցությունը:

Արդյոք կարո՞ղ է կոնֆլիկտը լինել նպաստավոր:

Կարծիք կա, որ կոնֆլիկտը կարող է ունենալ դրական ազդեցություն՝ խթանելով անձնական, սոցիալական կամ տնտեսական զարգացումը, ավելին՝ գոյություն ունեն այսպես կոչված <<առողջ կոնֆլիկտներ>>, երբ կոնֆլիկտող կողմերը պատրաստ են ողջամտորեն քննարկելու միմյանց տեսակետները: Եվ իրոք, հնարավոր է, որ կոնֆլիկտները հանգեցնում են ստեղծարար լուծումների:

Պարզվում է, որ կոնֆլիկտները ունեն նաև դրական կողմեր. օգնում են խնդիրների, դրանց վերաբերյալ տեսանկյունների, լուծման տարբերակների բացահայտմանը, նպաստում հարաբերությունների արդյունավետության բարձրացմանը, երբեմն կարող են միավորել մարդկանց արտաքին ճնշման դեմ: Գուցե իսկապես պատահական չէ մեծերի կողմից պարադոքսի նման հնչող այն խոսքը, որ եթե ընտանիքում չկան վիճաբանություններ, ապա այնտեղ ինչ-որ բան կարգին չէ: Ի վերջո տարաձայնությունները կարելի է դիտարկել իբրև «նուրբ ազդակ», որի միջոցով ստուգվում են ներընտանեկան կայունությունը և ի հայտ եկող խնդիրները համատեղ լուծելու կարողություններն ու ցանկությունները:

Եզրակացություն

Այսպիսով ընդունեցիք, որ ընտանիքը հասարակության կարևորագույն հիմնասյուներից մեկն է, և շատ կարևոր է նրա ամրությունը, կայունությունը, բարոյահոգեբանական առողջ մթնոլորտը, ընտանիքում իշխող մաքուր սերն ու հավատարմությունը: Բայց քանի որ ընտանիք կազմող մարդիկ իրենց բնույթով շատ տարբեր են թե գաղափարներով, թե բնավորություններով և թե ցանկություններով, ուստի տարաձայնությունները, բախումները, կոնֆլիկտներն ու կոնֆլիկտային իրավիճակները մշտապես են:

Հետևաբար պետք չէ խուսափել դրանցից, անհրաժեշտ է բաց ճակատով առնչվել և փորձել լուծումներ գտնել:

Կոնֆլիկտների հաղթահարման տեսանկյունից անհրաժեշտ է.

1. վերլուծել և բացահայտել կոնֆլիկտը կազմող կողմերի պահանջումները և հնարավորության դեպքում բավարարել դրանք,

2. տալ արտահայտվելու, խոսելու հնարավորություն, ինչպես բարկությունը նվազեցնելու, այնպես էլ իր տեսակետը արտահայտելու համար,

3. հասկանալ, որ շատ հաճախ դիրքորոշումները չեն համընկնում ու կարելի է հետաքրքրությունների շրջանակներում լուծել տարաձայնությունները:

Այն պարագայում, երբ կոնֆլիկտները ոչ մի կերպ լուծել հնարավոր չէ, հարկավոր է այն մեղմել, ստեղծել միջավայր, ուր կողմերը կունենան համագործակցային նորմալ փոխհարաբերություններ՝ անկախ նրանց միջև կոնֆլիկտի ամկայությունից:

Հարկավոր է, որ ընտանիքի անդամների միջև լինեն փոխըմբռնում, փոխզիջում, հարգանք միմյանց նկատմամբ և ամենակարևորը սեր, որովհետև սերն ամենից առաջ

պատասխանատվություն է սիրած մարդկանց, նրանց ճակատագրերի, նրանց ապագայի հանդեպ: Միրել նշանակում է նվիրվել անձնուրացորեն և սիրած էակի համար ստեղծել

երջանկություն: Չկա ինչ-որ հատուկ „սիրո գիտություն“, կա մարդկայնության գիտություն. ով տիրապետում է նրա այբուբենին, նա պատրաստ է բարոյահոգեբանական ազնիվ

հարաբերությունների. <<Մերը մարդկայնության ամենախիստ քննությունն է,, -գրում է

Վ.Սուխոմլինսկին իր <<Երիտասարդ սերնդի բարոյական իդեալը>>գրքում(Երևան 1960թվ.)
Ուստի թող մարդիկ կարողանան հանձնել այդ քննությունը և բոլորի ընտանիքներում իշխեն սերն ու համերաշխությունը:

Օգտագործված գրականության ցանկ

- Ի. Վ. Գրեբեննիկով, Ի. Վ. Դուբրովինա, Գ. Պ. Ռազումիսինա**
„Ընտանեկան կյանքի բարոյագիտություն և հոգեբանություն,, Երևան 1986թվ.
- Ն. Ա. Հարությունյան „Ընտանիքի կայունության հոգեբանական հիմքերը,, Երևան 2018թվ.**
- Ա. Խաչն , Մ. Մացկովսկի „Ժամանակակից ընտանիքը և նրա պրոբլեմները,, Երևան 1982թվ.**
- Վ. Ա. Սուխումլինսկի „Երիտասարդ սերնդի բարոյական իդեալը ,, Երևան 1960 թվ.**
- Ս. Ա. Սեդրակյան, Ն. Ա. Հարությունյան „Ներընտանեկան կոնֆլիկտների առաջացման պատճառները և հաղթահարման ուղիները,,
„Հոգեբանությունը և կյանքը,, հանդես Զանգակ -97, Երևան 2001թվ.**

